

ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)

1.ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Գործարար վարչարարություն (կառավարում) 041301.04.7
2. Բուհը	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
3. Ծրագիրը հավատարմագրված է	
4. Շնորհվող որակավորումը	Կառավարման մագիստրոս
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2024-2025 ուստարի
6. Ուսումնառության լեզուն	հայերեն
7. Ուսուցման ձևը	հեռակա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները.
<p>Հեռակա ուսուցման ձևով ԵՊՀ ԻՄ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:</p> <p>1. «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով հեռակա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելության մրցութային հարցազրույցով առանց ընդունելության քննության կարող են մասնակցել ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած.</p> <p>1.1.«Գործարարություն և վարչարարություն» մասնագիտական ուղղության և «Տնտեսագիտություն» մասնագիտության ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով հաստատված կրթական ծրագրերի ԵՊՀ ԻՄ և այլ բուհերի բակալավրի առկա և հեռակա ուսուցման ձևերի վերջին երեք տարվա շրջանավարտները,</p> <p>1.2 ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում գորացրված «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտական ուղղության և «Տնտեսագիտություն» մասնագիտության ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով հաստատված կրթական ծրագրերի ԵՊՀ ԻՄ և այլ բուհերի բակալավրի առկա և հեռակա ուսուցման ձևերի շրջանավարտները:</p>

1.3 «Գործարարություն և վարչարարություն» մասնագիտական ուղղության և «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի և այլ ծրագրերի շրջանավարտների համար, ովքեր չեն հաղթահարել ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով սահմանված ատեստավորման գնահատականի և ՄՈԳ-ի նվազագույն շեմը, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում ծառայած և երեք տարուց ավելի վաղ գորացրված դիմորդների համար, ընդունելությունը կատարվում է «Կառավարում /ըստ ոլորտի/» բակալավրի կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա՝ մրցութային կարգով:

9. Ծրագրի նպատակները.

Գործարար վարչարարություն (կառավարում) մագիստրոսական ծրագրի նպատակը բիզնեսի ոլորտի մրցունակ կառավարիչների՝ մենեջերների պատրաստումն է:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

- Ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**
 Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի
- Ա1.** Ներկայացնելու ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները,
 - Ա2.** Քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները:
 - Ա3.** Կիրառելու, դասակարգելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպությունների համար:
 - Ա4.** Դասակարգելու կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները:
 - Ա5.** Նկարագրելու մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդները, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությունը:
 - Ա6.** Սահմանելու աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները:
 - Ա7.** Սահմանելու կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրույթները և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը:

բ. Գործնական մասնագիտական կարողություններ
 Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. Կառուցելու կազմակերպության որակի կառավարման համակարգի և գործարար գործընթացների իրականացման մոդելներ:

Բ2. Նախագծելու կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցելու լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին:

Բ3. Ընտրելու տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և ընդունելու արդյունավետ կառավարչական որոշումներ:

Բ4. Առաջարկելու կազմակերպության ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ ֆինանսական կայունության ամրապնդման համար:

Բ5. Առաջարկելու նոր կիրառություններ տվյալ բիզնես ոլորտում օգտագործվող պլանավորման, կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար,

Բ6. Կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար:

գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի

Գ1. Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:

Գ2. Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:

Գ3. Վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:

Գ4. Իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Գ5. Բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:

Գ6. Ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

Գ7. Ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջումները և մասնագիտական

զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:
ԳՑ. Նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:

Կցված է
11. Ծրագրի ուսումնական պլանը

13. Գնահատման ձևերը

12. Ուսումնական պլանի քարտեզը
Կցված է

Հետազոտական աշխատանք
Լուսապատկերաշար
Բանավոր հարցում
Գործնական աշխատանք
Թեմատիկ աշխատանք
Կիսամյակային ամփոփիչ աշխատանք
Թղթապանակ
Ինքնագնահատում, փոխգնահատում
Ռեֆերատ
Էսսե
Խմբային ներկայացում
Տարաբնույթ առաջադրանքներ
Զեկուցումներ
Ուսումնական նախագծեր
Գրավոր կարճ հաղորդագրություններ
Ստուգարքներ
Քննություններ
Մագիստրոսական թեզի պաշտպանություն:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել կազմակերպությունների՝ ցածր, միջին և բարձր օղակի պաշտոններում:
Ծրագրի շրջանավարտները կարող են նաև շարունակել իրենց ուսումը ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ

տպագիր նյութեր,
 էլեկտրոնային ռեսուրսներ,
 համացանցային կայքեր:
 Ուսումնառության օժանդակության ձևեր.
 պասիվ, ակտիվ և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ,
 տեսողական (շնորհանդեսային) և տեսալսողական միջոցներ

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագրի մշակելիս

ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (հաստատված ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի N714-ն որոշմամբ)
 Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (հաստատված 2023թ. մարտի 23-ին ԵՊՀ գիտական խորհրդում),
 Երևանի պետական համալսարանի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (հաստատված 2023թ. ապրիլ 29-ին ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում),
 ԵՊՀ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագիր

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

18. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

1.Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

- ներկայացնելու դասընթացի նպատակները և խնդիրները, մեկնաբանելու և պարզաբանելու դասընթացի կրթական վերջնարդյունքները և դրանց կապն ու համադրումը համապատասխան կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ,
- կիրառելու դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ,
- կիրառելու ուսանողներին մոտիվացնող և նրանց ակտիվությունը խրախուսող մեխանիզմներ և մեթոդներ,
- սահմանելու կրթական ընդհանուր նպատակ և ջանքեր ներդնելու դրա իրականացման ուղղությամբ,
- զարգացնելու ուսանողների վերլուծական, փաստերն ու իրողությունները ընդհանրացնելու, երևույթները համակողմանիորեն գնահատելու, եզրակացություններ կատարելու և տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները,
- կազմելու դասընթացի փաթեթ:

Հետազոտական

- իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ,
- վերլուծելու մանկավարժական սեփական գործունեության արդյունավետությունը,
- կիրառելու միջառարկայական և համալիր հետազոտությունների մեթոդաբանություններ,
- ճիշտ ընտրելու և համադրելու հետազոտությունների իրականացման և կիրառվող ուսուցման մեթոդները

Հաղորդակցման

- ուսանողի հետ հաստատելու միջանձնային և կառուցողական հարաբերություններ,
- արդյունավետ պլանավորելու դասընթացը և դասապրոցեսը, կառավարելու լսարանը, բոլոր ուսանողներին դարձնելու ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ,
- հաղորդակցվելու որևէ օտար լեզվով,
- պահպանելու մանկավարժական և մասնագիտական էթիկայի կանոնները,
- պահպանելու բարձրագույն կրթության ոլորտի իրավական նորմերը:

SՀS կիրառություն

- ուսումնական գործընթացում ազատ կիրառելու համակարգչային հիմնական ծրագրերը (MS Office փաթեթ՝ Word, Excel, Power-Point, Internet, e-mail),
- պատրաստելու և ներկայացնելու լուսացուցադրություններ,
- օգտագործելու առցանց ուսուցման տեխնոլոգիաներ,
- կիրառելու Moodle հարթակը դասապրոցեսը իրականացնելու համար:

2. Մասնագիտական կարողություններ

- ներկայացնելու և մեկնաբանելու կառավարման ոլորտի հիմնախնդիրները և ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանական հիմքերը,
- սահմանելու դասավանդվող դասընթաց(ներ)ի հիմնական հասկացությունները, ուսումնասիրության հայեցակարգային մոտեցումները,
- ուսուցման գործընթացում ստեղծելու միջառարկայական կապեր,
- ձևակերպելու դասավանդվող առարկայի ոլորտում խնդիրներ, ընտրելու անհրաժեշտ ուսումնական նյութեր և ուսուցման միջոցներ,
- կիրառելու ոլորտի խնդիրների ուսումնասիրման մեթոդական առաջավոր փորձը և դրսևորելու ստեղծագործական մոտեցումներ:

3. Ընդհանուր պահանջներ

Գիտական աստիճան

- Որակավորման կամ գիտական աստիճանի առկայություն դասավանդվող

դասընթացի/մոդուլի ոլորտում:

- Գիտական աստիճանի և կոչման առկայություն:
- Հետազոտական աշխատանքների առկայություն տնտեսագիտության կամ դասավանդվող դասընթացի /մոդուլի ոլորտում:
- Մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովների:

Մանկավարժական փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն /ցանկալի է/:

Գիտամանկավարժական կամ պրակտիկ աշխատանքի փորձ

- Գիտական կամ մանկավարժական աշխատանքի փորձառություն՝ բացի «դասախոս» տարակարգի համար (նվազագույնը 3 տարի):
- Մասնակցություն որակավորման բարձրացման դասընթացներին վերջին 5 տարիների ընթացքում:
- Մասնագիտական պրակտիկ գործունեության փորձառություն /ցանկալի է/:

12. Ծրագրի ուսումնական պլանը/կցված է/

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1.	Ներկայացնելու ISO 9001:2015 միջազգային ստանդարտներին համապատասխան որակի և ռիսկերի կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման սկզբունքներն ու պահանջները,	Բ1.	Կառուցելու կազմակերպության որակի կառավարման համակարգի և գործարար գործընթացների իրականացման մոդելներ:
Ա2.	Քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները:	Բ2.	Նախագծելու կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցելու լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին:
Ա3.	Կիրառելու, դասակարգելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպությունների համար:	Բ3.	Ընտրելու տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և ընդունելու արդյունավետ կառավարչական որոշումներ:
Ա4.	Դասակարգելու կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները:	Բ4.	Առաջարկելու կազմակերպության ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝ ֆինանսական կայունության ամրապնդման համար:
Ա5.	Նկարագրելու մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդները, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությունը:	Բ5.	Առաջարկելու նոր կիրառություններ տվյալ բիզնես ոլորտում օգտագործվող պլանավորման, կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար,
Ա6.	Սահմանելու աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները:	Բ6.	Կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար:
Ա7.	Սահմանելու կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրոյթները և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			

Գ1.	Դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:	Գ3.	Վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:
Գ2.	Կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար:	Գ4.	Իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:
Գ5	Բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:	Գ6	Ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:
Գ7	Ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջումները և մասնագիտական զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով:	Գ8	Նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:

ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքներ																					
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7	Գ8	
Տեղեկատվական տեխն. կիրառումը կառավար. ոլորտում	0104/Մ 01														+	+	+						
Հետ. պլան. և մեթոդ. նորարար. և ձեռներեց. ոլորտում	0201/Մ01														+	+	+	+		+			
Կազմ. գործ. կոնսորցիանգ (օտար լեզվով)	0201/Մ02			+			+			+					+		+	+					
Հարկ. կառավ. կազմակերպ.	0201/Մ03		+	+			+				+		+				+	+	+				
Կազմակերպ. վարք	0201/Մ04					+		+					+			+	+	+	+	+	+		
Գործարար գործընթացների կառավարում	0201/Մ05		+	+	+				+						+	+	+	+	+	+	+	+	+
Ֆինանսական մենեջմենթ	0201/Մ06	+		+									+		+		+		+	+	+		
Ձեռնարկ. ռիսկերի կառավ. և կազմակերպ. վարկ.	0201/Մ07	+		+					+			+							+	+	+		
Անձնակազմի կառավարում	0201/Մ08					+		+					+	+	+				+	+	+		
Նախագծերի կառավարում	0201/Մ09		+	+									+	+		+	+						

Կորպորատիվ կառավարում	0201/Մ10		+		+	+				+	+			+	+	+	+	+	+	+	+	+
Կառավարմ. ոլորտի գործն. խնդիրների լուծում	0201/Մ11	+		+										+	+	+	+	+	+	+	+	+
Մարքեթինգի կառավարում	0201/Մ12				+	+		+						+	+	+	+	+	+	+	+	+
Ռազմավարական կառավարում	0201/Մ13		+		+				+						+			+				
Լոգիստիկա. մատակարարման շղթաների կառավարում	0201/Մ14		+	+					+		+			+	+	+		+	+	+	+	+
Աշխատանք. հարաբեր. պետական կարգավորում	0201/Մ15			+			+							+	+	+	+	+	+	+	+	+
Առաջնորդություն	0201/Մ16			+	+								+	+			+	+	+	+	+	+
Կառավարման հոգեբանություն	0201/Մ17					+		+						+	+	+	+	+	+	+	+	+
Գիտական սեմինար	0201/Մ18						+		+					+			+	+	+	+	+	+
Մասնագիտական պրակտիկա	0201/Մ19							+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Մագիստրոսական թեզ	0201/Մ20							+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+

« ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

ամբիոնի կոդ	Ուսումնական/հետազոտական մոդուլի անվանումը	կրեդիտներ	Ուսումնական բեռնվածությունը, ժամ				ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐ				գնահ. ձևը	
			ընդ.	դաս.	գործն./սեմ.	լաբ.	ինք.	1	2	3		4
								կրեդիտ	կրեդիտ	կրեդիտ		կրեդիտ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		63	1890	135	75		1680	21	21	18	3	
	Ընդհանուր դասընթացներ	6	180	5	15		160	6				
0104	Տեղեկատվական տեխնոլոգիաները կառավարման ոլորտում	3	90		10		80	3				ստ.
0201	Հետազոտության պլանավորում և մեթոդներ նորարարության և ձեռներեցության ոլորտում	3	90	5	5		80	3				Առ.ընթ. գնահատման
	Մասնագիտական դասընթացներ	12	360	20	20		320	12				
0201	Կազմակերպությունների գործունեության կոնտրոլինգ (օտար լեզվով)	6	180	10	10		160	6				առ.ընթ. գնահատման
0201	Հարկերի կառավարումը կազմակերպություններում	6	180	10	10		160	6				առ.ընթ. գնահատման
	Մասնագիտացման դասընթացներ	45	1350	110	40		1200	3	21	18	3	
	Պարտադիր	24	720	50	30		640	3	21			
0201	Կազմակերպական վարք	3	90	10			80	3				առ.ընթ. գնահատման
0201	Գործարար գործընթացների կառավարում	6	180	10	10		160		6			առ.ընթ. գնահատման
0201	Ֆինանսական մենեջմենթ	6	180	10	10		160		6			առ.ընթ. գնահատման
0201	Ձեռնարկատիրական ռիսկերի կառավարում և կազմակերպությունների վարկանշում	6	180	10	10		160		6			առ.ընթ. գնահատման
0201	Անձնակազմի կառավարում	3	90	10			80		3			առ.ընթ. գնահատման

	Կամրնտրական	21	630	60	10		560			18	3	
0201	Նախագծերի կառավարում	3	90	10			80			3		առ.ընթ. գնահատման
0201	Կորպորատիվ կառավարում	3	90	10			80			3		առ.ընթ. գնահատման
0201	Կառավարման ոլորտի գործնական խնդիրների լուծում (case study)	3	90	10			80			3		առ.ընթ. գնահատման
0201	Մարքեթինգի կառավարում	3	90	10			80			3		առ.ընթ. գնահատման
0201	Ռազմավարական կառավարում	3	90	10			80			3		առ.ընթ. գնահատման
0201	Լոգիստիկա . մատակարարման շղթաների կառավարում	6	180	10	10		160			6		առ.ընթ. գնահատման
0201	Աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորում	6	180	10	10		160			6		առ.ընթ. գնահատման
0201	Առաջնորդություն	3		10			10				3	առ.ընթ. գնահատման
0201	Կառավարման հոգեբանություն	3	90	10			80				3	առ.ընթ. գնահատման
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ		27	810		30		780		2	5	20	
0201	Գիտական սեմինար	6	180		30		150		2	2	2	ստ.
0201	Մասնագիտական պրակտիկա	3	90				90			3		ստ.
0201	Մագիստրոսական թեզ	18	540				540				18	պաշտպ.
ԸՆԴԱՄԵՆԸ		90	2700	135	105		2460	21	23	23	23	

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

1.0104/Մ01	2. Տեղեկատվական տեխնոլոգիաները կառավարման ոլորտում	3. 3 ECTS կրեդիտ
4. 3.5 ժամ/շաբաթ	5.0/10/0	
6.1-ին կիսամյակ	7.ստուգաք	
<p>8. Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ գիտելիքներ կառավարման ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների մաթեմատիկական և ծրագրային ապահովման գործիքակազմի (Big Data, Eviews, MatLab և այլն), ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ, ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են տեղեկատվական տեխնոլոգիաների և մեթոդների հիման վրա համակարգված կառավարում իրականացնելու համար, ուսանողներին փոխանցել կառավարման ծրագրային ապահովման համակարգերի հետ աշխատելու հիմնական հմտությունները:</p>		
<p>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. նկարագրելու կառավարման ոլորտում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից մեթոդներն ու մոդելները, 2. տարբերակելու նախագծերի կառավարման տարբեր մեթոդոլոգիաները (Waterfall, Agile, Scrum, Kanban), իրենց լավագույն կիրառությունները, ինչպես նաև գործիքներն ու մեխանիզմները, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. գործնականորեն օգտագործելու տեղեկատվական տեխնոլոգիաների մաթեմատիկական և ծրագրային գործիքակազմը, 2. պլանավորելու և վերահսկելու նախագծերի կառավարման գործընթացները, 3. ինքնուրույն ստեղծելու, կարգավորելու և կառավարելու Agile նախագծեր, 4.ընտրելու նախագծերի կառավարման ճիշտ մեթոդաբանություն յուրաքանչյուր տեսակի խմբի և յուրաքանչյուր բարդության նախագծի համար, 5. հիմնովին տիրապետելու նախագծերի կառավարման համակարգերից ամենաապահանջվածներին (Jira, ClickUp): <p>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. արդյունավետորեն պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները, 2. վերլուծելու առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները 		
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:</p> <p>Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու</p>		

<p>համակարգված ներկայացնելու համար:</p> <p>Գ3. վարժ կիրառելու առաջադեմ SՅՏ-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար:</p>
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. գործնական առաջադրանքներ, 2. նախագծային մեթոդ, 3. համագործակցային, 4. խմբային ուսուցում
<p>12.Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <p>Ստուգարքը անցկացվում է հարցատոմսերով, ստուգվում են ուսանողի՝ տարբեր համակարգչային փաթեթների իմացությունը և դրանցով տարատեսակ խնդիրներ լուծելու հմտությունները:</p>
<p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Նախագծերի կառավարման հիմունքներ և ծանոթություն նախագծերի կառավարման հետ: Թեմա 2. Նախագծերի կառավարման հիմնական հասկացություններ և տերմինաբանություն: Թեմա 3. Waterfall, Agile, Scrum, Kanban մեթոդոլոգիաներ: Թեմա 4. Աշխատանքային գործընթացների ավտոմատացում և աշխատանքային տարբեր ընթացքների (workflow) կարգավորում: Թեմա 5. Պատկերացում նախագծի ժամանակացույցի և milestone-ների մասին: Գանտի աղյուսակ: Թեմա 6. Jira-ի հիմնական կառուցվածքը և հնարավորությունները: Թեմա 7. ClickUp-ի հիմնական կառուցվածքը և հնարավորությունները: Թեմա 8. Ծանոթություն ClickUp-ի տարբեր View-երի հետ (Gantt, Mind Map, Table, Board, Calendar, Timeline, Workload): Թեմա 9. Արդյունքների վերլուծությունը և հաշվետվությունները ClickUp-ում:</p>
<p>14.Հիմնական գրականության ցանկ</p> <ol style="list-style-type: none"> 1. Project Management Institute (PMI). A Guide to the Project Management Body of Knowledge (PMBOK® Guide) – Seventh Edition and The Standard for Project Management, 2021. 2. Eric Verzuh. The Fast Forward MBA in Project Management: The Comprehensive, Easy-to-Read Handbook for Beginners and Pros, 6th Edition, 2021. 3. Darrell Rigby. Doing Agile Right: Transformation Without Chaos, 2020, Harvard Business Review Press. 4. J.J. Sutherland. The Scrum Fieldbook: A Master Class on Accelerating Performance, Getting Results, and Defining the Future, 2019, Currency. 5. David J. Anderson. Kanban: Successful Evolutionary Change for Your Technology Business, 2010, Blue Hole Press. 6. ClickUp University - https://university.clickup.com/. 7. Atlassian University - https://university.atlassian.com/

1.0201/Մ01.	2. Հետազոտության պլանավորում և մեթոդներ նորարարության և ձեռներեցության ոլորտում	3.3 ECTS կրեդիտ
4.3.5 ժամ/շաբաթ	5. 5/5/0	
6. 1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է` ուսանողներին տալ գիտելիքներ նորարարության և ձեռներեցության մասնագիտական ոլորտում հետազոտությունների պլանավորման, մեթոդների և վերլուծության ոլորտում, ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ, ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական հետազոտությունների պլանավորման, մեթոդների և վերլուծության հիման վրա տարբեր խնդիրներ ձևակերպելու և լուծելու գործընթացի իրականացման համար:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի`</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. նկարագրելու ֆինանսատնտեսական և կառավարչական հետազոտությունների պլանավորման և վերլուծության ժամանակակից մեթոդները ու մոդելները, 2. ներկայացնելու հետազոտությունների պլանավորման և վերլուծության` բիզնես-գործընթացներում և մարքեթինգում օգտագործվող մեթոդները և դրանց իրականացման եղանակները, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. օգտագործելու ֆինանսատնտեսական և կառավարչական հետազոտությունների պլանավորման և վերլուծության ժամանակակից մեթոդները պրակտիկ խնդիրներում, 2. ժամանակակից մեթոդների ընտրությանն նպատակով կատարելու մասնագիտական հետազոտությունների համեմատական վերլուծություն և պլանավորում, 3. իրականացնելու մասնագիտական հետազոտությունների պլանավորման և վերլուծության մեթոդների տեսակների դասակարգում, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. օգտագործելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) հայթայթած տեղեկատվությունը, 2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, 3. կատարելու գիտական հետազոտություններ` օգտագործելով տվյալների ինտելեկտուալ վերլուծության վերաբերյալ գիտելիքները 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում` մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար,</p> <p>Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը` իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու</p>		

համակարգված ներկայացնելու համար,

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար,

Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով,

Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություններ,
2. նախադեպերի վերլուծություն,
3. խմբային աշխատանք,
4. անհատական աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր
2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր
3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր
4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Թեմա 1. Հետազոտության թեմայի ընտրությունը և արդիականության ձևակերպումը:

Թեմա 2. Հետազոտության գրականության ամփոփումը և հղումների ավելացումը: **Թեմա**

3. Գործնական հետազոտությունների իրականացման գործընթացը: **Թեմա 4.** Տեսական հետազոտությունների իրականացման մոտեցումները: **Թեմա 5.** Գիտական աշխատանքի կառուցվածքը. բաժինների ձևակերպումը, հետազոտված հիմնախնդրի ձևակերպումը, հետազոտության մեթոդաբանության ձևակերպումը, խնդրի լուծման նկարագրությունը և ամփոփումը: **Թեմա 6.** Ներածություն քննադատական հայեցակարգերի ու մտածելաձևերի ու նորարար համագործակցության միջև: **Թեմա 7.** Նորարարական մոտեցումով «Խնդիրներ լուծելու տեխնիկա»: **Թեմա 8.** Նորարարության արգելափակումները: Ի՞նչպես սպանել (անտեսել) ստեղծարար ջիդը: **Թեմա 9.** Ներածություն տեխնոլոգիաների, գյուտի, նորարարության և ձեռներեցության: Ռեսուրսների հայտնաբերում: **Թեմա 10.** Նորարար թիմի և կազմակերպության համապատասխանեցում, նորարարական շարժառիթների ստեղծում:

14. Հիմնական գրականության ցանկ

1. Баканов М. И., Мельник М. В., Шеремет А. Д. Теория экономического анализа. М.: Финансы и статистика, 2007.
2. Бернстайн Л. А. Анализ финансовой отчетности: теория, практика и интерпретация / пер. с англ. М.: Финансы и статистика, 2003.

3. Ковалев В. В. Управление финансовой структурой фирмы: учебное пособие. М.: Проспект; Велби, 2007.
4. Банк В. Р. Финансовый анализ: учеб. пособие / В.Р. Банк, С. В. Банк. — М.: ТК Велби, Изд-во Проспект, 2011.
5. Рузавин Г.И. Методология научного исследования: Учеб.пособие для вузов. – М.: ЮНИТ-ДАНА, 1999.
6. "The Spirit of Invention. The Story of the Thinkers, Creators, and Dreamers Who Formed our Nation," by Julie M. Fenster, Publications of Smithsonian Books.
7. "Innovation, The Five Disciplines for Creating What Customers Want," by Curtis R. Carlson & William W. Wilmont, SRI International. The innovators behind the computer mouse, HDTV. Robotic surgery. And other world-changing ideas, Publication of CROWN Business, NY.
8. "Yes We Have," by Stepan Partamian, Armenian Arts, 2011.
9. "Ten Types Of Innovation: the Discipline of Building Breakthroughs," by Larry Keeley, Ryan Pikkell, Brian Quinn, and Helen Walters, Wiley Press 2013.
10. "Creative Approaches To Problem Solving, A Framework for Innovation and Change" 3rd Edition," by Scott G. Isakson, K. Brian Doval and Donald J. Treffinger, Sage Publication, 2011.
11. "Creativity: Understanding Innovation in Problem Solving, Science, Invention, and the Art," by Robert Weisberg, Temple University, Copyright 2006.

1.0201/ Մ 02.	2. Կազմակերպությունների գործունեության կոնտրոլինգ (օտար լեզվով)	3.6 ECTS կրեդիտ
4. 6.5 ժամ/շաբաթ	5. 10/10/0 ժամ	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ճկուն, հավաստի և օպերատիվ տնտեսական տեղեկատվական համակարգի ստեղծման, պլանավորման, վերահսկման և կառավարչական որոշումների ընդունման ժամանակ դրա ընձեռած հնարավորություններից օգտվելու համար, ուսանողներին սովորեցնել ինքնարժեքի հաշվարկում, շահույթի կառավարում և ռիսկերի գնահատում, գործունեության արդյունավետության բարձրացման ռեզերվների հայտնաբերման մեթոդների տիրապետումը, արտադրանքի ինքնարժեքի հաշվառման մեթոդների տիրապետումը, որոշումների համեմատական արդյունավետության վերլուծությունը:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. չափելու կառավարչական ծախսերն ու ինքնարժեքը, 2. նկարագրելու գործունեության արդյունավետության պաշարները, 3. ներկայացնելու արտադրական հաշվառման համակարգերը, «standart-cost» «direct-cost» «activity-based cost», 		

4. քննարկելու գործունեության պլանավորման և բյուջետավորման սկզբունքները,
5. ներկայացնելու ռազմավարական, մարտավարական և օպերատիվ որոշումների ընդունման մեթոդները,

բ. գործնական մասնագիտական կարողություններ

1. գործնականում կիրառելու ռազմավարական, մարտավարական և օպերատիվ որոշումների ընդունման մեթոդները,
2. հիմնավորելու կառավարչական հաշվառման տվյալների հիմնա վրա կայացված կառավարչական որոշումները,
3. գնահատելու տարբեր ռեսուրսների օգտագործման և ողջ գործունեության արդյունավետությունը

գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),
2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում,

Ա6. սահմանելու աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները,

Բ2. նախագծելու կազմակերպության արդյունավետ կառավարման համար բյուջեների ձևավորման և կառավարչական հաշվառման համար տվյալների բազա, մասնակցել լոգիստիկական ցանցի ձևավորման աշխատանքներին,

Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար,

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ SՅՏ-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար,

Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. դասախոսություն
2. նախադեպերի վերլուծություն,
3. անհատական աշխատանք:

<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Կառավարչական հաշվառումը կազմակերպության կառավարման համակարգում: Թեմա 2. Ծախսերի դասակարգում: Ինքնարժեքի հաշվառման համակարգեր: Թեմա 3. Ինքնարժեքի հաշվառման համակարգեր: Թեմա 4. Տեղեկատվության վերլուծություն որոշումների կայացման համար: Թեմա 5. Կառավարչական հաշվետվողականություն: Թեմա 6. Կառավարչական վերահսկողության համակարգեր: Թեմա 7. Բյուջետավորում որպես պլանավորման, կառավարման և վերահսկողության գործիք: Թեմա 8. Ծախսերի կառավարում: Թեմա 9. Ռազմավարական և մարտավարական կոնտրոլինգ: Թեմա 10. Կոնտրոլինգի համակարգի մշակում և ներդրում: Թեմա 11. Արդյունավետության կառավարում: Թեմա 12. Կոնտրոլինգի առանձնահատկությունները տարբեր ոլորտներում:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ</p> <ol style="list-style-type: none"> 1. Концепция контроллинга. Управленческий учет. Система отчетности. Бюджетирование / Horvath & Partners ; пер. с нем. [В. Толкача, С. Данишевич, М. Гавриша ; науч. ред. В. Толкач]. - 4-е изд. - М. : Альпина Паблишерз, 2009. 2. Друри К. Управленческий учет для бизнес-решений: Учебник-М Юнити-Дана, 2012. 3. Голов С.Ф. - Управленческий учет: К, Либра.2009. 4. Управленческий учет: уч. пособие под ред. проф. Соколова Я.В М, Магистр, 2010.

1. 0201/ Մ 03.	2. Հարկերի կառավարումը կազմակերպություններում	3. 6 ECTS կրեդիտ
4. 6,5 ժամ/շաբաթ	5. 10/0/10	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հարկերի տնտեսական բովանդակությանը, դրանց ազդեցությունը տնտեսվարող սուբյեկտների վրա, սովորեցնել կազմակերպություններում հարկերի կառավարման հիմնական մեթոդները, ծանոթացնել ՀՀ հարկային համակարգին:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. քննարկելու պետության կողմից վարվող հարկային քաղաքականության իրականացման մեխանիզմները, 2. ներկայացնելու հարկերի ազդեցությունը տնտեսվարող սուբյեկտների վրա, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. կիրառելու ՀՀ հարկային օրենսդրության դրույթները, 		

<p>2. հաշվարկելու վճարման ենթակա հարկերն ու կառավարել դրանք, գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու բանավեճեր, 3. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա2. քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները,</p> <p>Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպությունների համար,</p> <p>Ա6. սահմանելու աշխատանքային հարաբերությունների պետական կարգավորման մոտեցումները, կառավարչական հաշվառման և բյուջետավորման համակարգերի կառավարման մեթոդները,</p> <p>Բ3. ընտրելու տարատեսակ մարքեթինգային ռազմավարություններ, ֆինանսական գործիքներ և ընդունել կառավարչական որոշումներ,</p> <p>Բ5. առաջարկելու նոր կիրառություններ տվյալ բիզնես ոլորտում օգտագործվող պլանավորման, կազմակերպման և վերահսկման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար,</p> <p>Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար,</p> <p>Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով,</p> <p>Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություններ, 2. նախադեպերի վերլուծություն, 3. խմբային աշխատանք, 4. անհատական աշխատանք:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր

<p>3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր</p> <p>4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1. Հարկերի էությունն ու գործառույթները: Թեմա 2. Հարկային կարգավորումը՝ որպես պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս: Թեմա 3. Հարկերի տեսակներն ու դասակարգումը: Թեմա 4. Հարկման հիմնական տարրերը: Թեմա 5. Հարկային քաղաքականության սկզբունքները: Թեմա 6. Ձեռնարկատիրության վրա հարկային քաղաքականության ազդեցությունը: Թեմա 7. Հարկային բեռ: Թեմա 8. Հարկային վարչարարության ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա: Թեմա 9. Հարկային համակարգի արդյունավետության գնահատումը: Թեմա 10. Հարկային կարգավորման միջազգային փորձը: Թեմա 11. ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականության առանձնահատկությունները: Թեմա 12. ՀՀ հարկային օրենսդրությունը: Թեմա 13. ԱԱՀ, ակցիզային հարկ: Թեմա 14. Շահութահարկ, Շրջանառության հարկ, Արտոնագրային վճարներ: Թեմա 15. Եկամտային հարկ, հողի հարկ, գույքահարկ:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հարությունյան Վ., Հարկեր և հարկազանձում, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2010: 2. Խաչատրյան Կ., Հարկեր և հարկային քաղաքականություն, Եր., 2014: 3. Հարկային քաղաքականության տեսական հիմունքներ ուս. ձեռնարկ, խմբ. Մ. Մելիքյան, Եր., 2013: 4. Миляков Н., Налоги и налогообложение, учебник, Мос., 2008. 5. Климова М., Штрафы: правонарушения и последствия, М., 2007.

1. 0201/ Մ 04.	2. Կազմակերպական վարք	3. 3 ECTS կրեդիտ
4.3,5 ժամ/շաբաթ	5.10/0/0	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է ուսումնասիրել կազմակերպության ներսում մարդու անհատական կամ խմբային վարքագծի, մարդու վարքի և կազմակերպության փոխազդեցության վրա ազդող հանգամանքները, կազմակերպական վարքագծի մակարդակներն ու վարքագծի գիտական հիմքերը:</p>		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <ol style="list-style-type: none"> 1. քննարկելու կազմակերպական միջավայրում աշխատողների վարքագծի բոլոր տեսանկյունները՝ օգտագործելով գիտական մեթոդներ և կիրառել համակարգային ուսումնասիրություն՝ պատճառահետևանքային կապերի սահմանման միջոցով, <p>բ. գործնական մասնագիտական կարողություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. օգտագործելու կազմակերպության գործունեության արդյունավետության և կազմակերպական միջավայրում կատարվող աշխատանքների որակի բարձրացման մեխանիզմները, 		

<p>2. մեկնաբանելու աշխատողների մոտ աշխատանքից բավարարվածության զգացումի բարձրացման, կազմակերպական հաղորդակցության որակի լավացման և աշխատանքի հետ կապված սթրեսի մեղման մեթոդները,</p> <p>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <p>1. վերլուծելու առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները,</p> <p>2. պլանավորելու ժամանակն ու այլ ռեսուրսները,</p> <p>3. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:</p>
<p>10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա5. նկարագրելու մարքեթինգային հետազոտությունների, անձնակազմի խթանման և գնահատման մեթոդներին, առաջնորդության և կորպորատիվ կառավարման մեթոդաբանությանը,</p> <p>Ա7. սահմանելու կառավարչական հիմնախնդիրների լուծմանն առնչվող հոգեբանական դրույթների և կազմակերպական վարքի էթիկայի նորմերը,</p> <p>Բ6. կազմակերպելու աշխատանքը բարձր արդյունավետություն ապահովելու համար՝ և՛ որպես խմբի անդամ, և՛ որպես խմբի ղեկավար, մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար:</p> <p>Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար,</p> <p>Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար,</p> <p>Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:</p> <p>Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա,</p> <p>Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար:</p>
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնասրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. դասախոսություններ,</p> <p>2. նախադեպերի վերլուծություն,</p> <p>3. խմբային աշխատանք,</p>

4. անհատական աշխատանք:
12.Գնահատման մեթոդները և չափանիշները. <ol style="list-style-type: none"> 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր
13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Կազմակերպական վարք առարկան: Թեմա 2. Անհատական վարքագիծ: Թեմա 3. Անձի տեսակները և էմոցիաները: Թեմա 4. Մոտիվացման ժամանակակից մոտեցումները: Թեմա 5. Որոշումների անհատական ընդունում: Թեմա 6. Խմբային վարքագիծ: Թեմա 7. Աշխատանքային թիմեր: Թեմա 8. Հաղորդակցություն: Թեմա 9. Առաջնորդություն և վստահություն: Թեմա 10. Իշխանություն և քաղաքականություն: Թեմա 11. Կոնֆլիկտներ և բանակցություններ: Թեմա 12. Կազմակերպական կառուցվածքներ: Թեմա 13. Կազմակերպական մշակույթ: Թեմա 14. Անձնակազմի կառավարման քաղաքականություն: Թեմա 15. Կազմակերպական փոփոխություններ և կազմակերպական զարգացում:
14.Հիմնական գրականության ցանկ <ol style="list-style-type: none"> 1. Роббинз, Стивен П., Основы организационного поведения, М., 2006. 2. Джералд Гринберг, Организационное поведения. От теории к практике, М., 2004. 3. Дафт Р., Уроки лидерство, М., 2006. 4. Пивоваров С., Сравнительный менеджмент, Титер, 2008.

1. 0201/ Մ 05	2. Գործարար գործընթացների կառավարում	3. 6 ECTS կրեդիտ
4.6,5 ժամ/շաբաթ	5.10/0/10	
6.2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
8.Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել կառավարման գործընթացային մոտեցման ներդրման հիմունքներին, կազմակերպության կառավարման համակարգերի նախագծման հիմնական սկզբունքներին, ուսանողներին սովորեցնել՝ կատարել ինքնարժեքի հաշվարկում, շահույթի կառավարում և ռիսկերի գնահատում, տիրապետել գործունեության արդյունավետության բարձրացման ռեզերվների հայտնաբերման և արտադրանքի ինքնարժեքի հաշվառման մեթոդներին, կատարել որոշումների համեմատական արդյունավետության վերլուծություն:		
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու ձեռնարկության կառավարման համակարգի կառուցվածքը, 2. թվարկելու կառավարման գործընթացային մոտեցման սկզբունքները, 3. նկարագրելու բիզնես գործընթացների մոդելավորման հիմնական դրույթները, բ. գործնական մասնագիտական կարողություններ <ol style="list-style-type: none"> 1. նախագծելու կազմակերպության կառուցվածքը, 		

2. կիրառելու բիզնես գործընթացների ռեինժինիրինգի տեխնոլոգիան,

գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ

1. օգտվելու գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),

2. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

Ա2. քննարկելու կազմակերպության նյութական, տեղեկատվական և այլ հարակից հոսքերի, ռազմավարական և ֆինանսական կառավարման ընդհանուր համակարգերի ձևավորման և վերլուծության ժամանակակից տեխնոլոգիաները,

Ա3. կիրառելու կառավարչական որոշումների ընդունման, աշխատանքների նախագծման և իրականացման մեթոդները՝ արտաքին փոփոխվող միջավայրում գործող կազմակերպություններում,

Ա4. դասակարգելու կազմակերպություններում ինովացիայի և մարքեթինգի կառավարման, գործարար գործընթացների ռեինժինիրինգի ժամանակակից տեխնոլոգիաները,

Բ1. կառուցելու կազմակերպության որակի կառավարման համակարգի և գործարար գործընթացների իրականացման մոդելներ,

Գ1. դրսևորելու վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտների խնդիրների, ինչպես նաև հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարների ձևավորման համար,

Գ2. կիրառելու մասնագիտական հաղորդակցման միջոցները ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լայն հանրությանը՝ իր եզրահանգումները, հիմնավորումները և հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու համար,

Գ3. վարժ կիրառելու առաջադեմ S2S-ներ մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներում նոր և բարդ խնդիրների լուծման ու հետազոտությունների կատարմանը օժանդակելու համար,

Գ4. իրականացնելու մասնագիտական և կամ ոչ մասնագիտական ոլորտներին առնչվող քանակական և որակական տվյալների վերլուծություն և գնահատում՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով,

Գ5. բարդ և անձանոթ աշխատանքային իրադրություններում կայացնելու կառավարման ռազմավարական որոշումներ՝ հիմնվելով համապատասխան մասնագիտական գիտելիքների, պատմամշակութային, էթնիկ և կայուն զարգացման գործոնների վրա,

Գ6. ինքնուրույն ստեղծել և ղեկավարել մասնագիտական կամ հետազոտական թիմ և պատասխանատվություն ստանձնել համագործակցային միջավայրի ձևավորման և թիմի անդամների մասնագիտական առաջընթացի համար,

Գ7. ինքնուրույն բացահայտելու իր կրթական պահանջումները և մասնագիտական

<p>զարգացման կարիքները՝ ուսումնառությունը շարունակելու նպատակով, Գ8. նպաստելու քաղաքացիական հասարակության զարգացմանը, ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը:</p>
<p>11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. 1. դասախոսություններ, 2. անհատական աշխատանք:</p>
<p>12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են. 1. Ընթացիկ ստուգումներ – առավելագույնը՝ 4 միավոր 2. Ինքնուրույն աշխատանք- առավելագույնը 6 միավոր 3. Մասնակցության միավոր առավելագույնը 3 միավոր 4. Եզրափակիչ քննություն առավելագույնը 7 միավոր</p>
<p>13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից. Թեմա 1. Կառավարման համակարգի նախագծումը: Թեմա 2. Կառավարման դերերը և կառավարչական դերերի կառուցվածքը: Թեմա 3. Նպատակների և խնդիրների փոխկապվածությունը և բալանսավորվածությունը: Թեմա 4. Ֆինանսական ռեսուրսների կառավարման ենթահամակարգի նախագծումը: Թեմա 5. Մարքեթինգի կառավարման ենթահամակարգի նախագծումը: Թեմա 6. Բիզնես-գործընթացների նախագծումը: Թեմա 7. Անձնակազմի կառավարման կազմակերպումը: Թեմա 8. Կազմակերպության կառավարման համակարգի ավտոմատացումը: Թեմա 9. Արդյունավետության կառավարումը:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ. 1. Репин В., Елиферов В., Процессный подход к управлению. Моделирование бизнес-процессов. Москва: Манн, Иванов и Фербер.2013.</p>

1.0201/Մ 06	2.Ֆինանսական մենեջմենթ	3. 6 ECTS կրեդիտ
4.6.5 ժամ/շաբաթ	5.10/10/0	
6.2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ քննությունների գնահատման	
<p>8.Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել մշակել կազմակերպությունների ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգ, կարողանալ կայացնել որոշումներ և կատարել ֆինանսական կանխատեսումներ ոչ լրիվ տեղեկատվության առկայության պայմաններում, կարողանալ աջակցել կազմակերպության ռազմավարության իրականացմանը:</p>		
